ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի օգոստոս ամսվա գործունեության վերաբերյալ

Ընթացիկ աշխատանքներ

Նախնական տվյալներով 2021 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 18,449.6 մլն դրամ՝ պլանավորված 12,500.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 47.6 տոկոսով կամ 5,949.6 մլն դրամով: Հավաքագրված եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ թերակատարվել են 47.2 տոկոսով կամ պակաս է հավաքագրվել 16,519.3 մլն դրամ:

Օգոստոս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2,414.5 մլն դրամ՝ պլանավորված 1,800.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 34.1 տոկոսով կամ 614.5 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում հաշվառվել է թվով 89, լուծարվել՝ 7 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են թվով 95 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 33-ը՝ ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 14-ի N 336-Ա որոշման 8-րդ կետով նախատեսված վնասի չափի հիմնավորվածության ճշտության, 27-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 21-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 8-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 6 այլ ուսումնասիրություններ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 7,803 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 7,690:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 1 հայցադիմում՝ 250,0 հազ. դրամ գումարով:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 37 պայմանագրեր:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 2 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Հաշվետու ամսում ամփոփվել է պատերազմական գործողությունների հետևանքով հարկ վճարողների մոտ առաջացած խնդիրների կարգավորմանն ու գործարարության համար առավել բարենպաստ հարկային դաշտի ձևավորմանն ուղղված օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի շրջանակներում կատարված միջոցառումները, որոնց համաձայն՝

- 6277 հարկ վճարողներ ազատվել են 6 մլրդ 883 մլն դրամ գումարի չափով պարտավորություններից, այդ թվում՝ 3 մլրդ 133 մլն գումարի չափով ապառքներից, 3 մլրդ 750 մլն դրամ գումարի չափով տույժերից և տուգանքներից.
- 91 հարկ վճարողների հետ կնքվել են պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցեր, որոնցով նախատեսվել է 5 մլրդ 239 մլն դրամ գումարի չափով ապառքների մարումներ կատարելու դեպքում 910 մլն դրամ գումարի չափով արտոնության տրամադրում: Ընդ որում, 19 ժամանակացույցերով նախատեսվել է պարտավորությունների մարում 12-ամսյա ժամանակահատվածում, 16-ը՝ 24-ամսյա, 29-ը՝ 36-ամսյա և 27-ը՝ 48-ամսյա ժամանակահատվածում: Ժամանակացույց կնքած 15 հարկ վճարողներ օգոստոսի 1-ի դրությամբ ժամկետից շուտ կատարել են 1 մլրդ 343 մլն դրամ գումարի չափով մարումներ՝ ազատվելով 150 մլն դրամ ապառքների վճարումից: 9 հարկ վճարողների հետ կնքված ժամանակացույցերը խզվել են դրանցով նախատեսված ժամկետներում մարումներ չկատարելու պատճառով.
- եկամտային հարկի և շահութահարկի եռամյա արտոնության տրամադրմամբ պայմանավորված՝ կատարվել է 281 անհատ ձեռնարկատերերի և 146 կազմակերպությունների կողմից 2020 թվականի համար վճարված 1 մլրդ 484 մլն դրամ եկամտային հարկի, շահութահարկի կանխավճարների և նվազագույն եկամտային հարկի գումարների վերադարձ կամ հաշվանցում այլ հարկային պարտավորությունների դիմաց.

- Արցախի Հանրապետության ռեզիդենտ ոչ պետական կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների մասով հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարի չափով պետական աջակցության տրամադրման միջոցառման շրջանակում հունվար-ապրիլ ամիսների համար 1126 շահառուի տրամադրվել է 930.6 մլն դրամ գումարի չափով աջակցություն.
- հարկ վճարողների ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և տոկոսների փոխհատուցման նպատակով վճարված հարկերի գումարի վերադարձի ծրագրի շրջանակում բյուջե մուտքագրված հարկային եկամուտների հաշվին ծրագրի մեկնարկից մինչև սեպտեմբերի 1-ը կատարվել է 372,2 մլն դրամ գումարի չափով վերադարձ.
- մարտի 15-ից գործարկվել է նոր հսկիչ կետ, որի կողմից արձանագրված տվյալների համաձայն՝ 2-րդ եռամսյակում Արցախի Հանրապետության տարածք են ներմուծվել 29.7 մլրդ դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ, արտահանվել՝ 15.3 մլրդ դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ.
- սեպտեմբերի 1-ի դրությամբ 472 հարկ վճարողների տրամադրվել է պատերազմական գործողությունների հետևանքով կրած նյութական վնասի չափի վերաբերյալ տեղեկանք՝ 2 մլրդ 388 մլն դրամի չափով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում կատարված փոփոխությունների կիրարկման ընթացակարգերին ծանոթանալու և փորձի փոխանակման նպատակով կոմիտեի երկու աշխատակիցներ գործուղվել են ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից վերադարձ ստանալու նպատակով պատրաստվել և վարձու աշխատողներին ու անհատ ձեռնարկատերերին է տրամադրվել վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին թվով 12 տեղեկանք:

Օգոստոս ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 605, ելքագրվել՝ 411 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 3 գրություն: